



### Պատվեր դիմում N° \_\_\_\_\_

Միջնորդ \_\_\_\_\_

Վաճառակետի հասցեն \_\_\_\_\_

Ֆիզիկական անձ

Ազգանուն \_\_\_\_\_

Մնուն \_\_\_\_\_ Հայրանուն \_\_\_\_\_

Իմ կազմակերպություն \_\_\_\_\_ ՀՎՀՀ \_\_\_\_\_

#### Մնձնագրային տվյալներ

Ծնվել է \_\_\_\_\_ Տրվել է \_\_\_\_\_  
օր ամիս տարի օր ամիս տարի

Մնձնագրի սերիա \_\_\_\_\_ Ուժ կողմից \_\_\_\_\_

Հասցե \_\_\_\_\_

Հեռախոս \_\_\_\_\_

Էլ. փոստ \_\_\_\_\_

Կանխավճարային

#### Տարիֆային պլան \_\_\_\_\_ (տարիֆային պլան)

SIM քարտի N° 8 9 3 7 4 0 1 \_\_\_\_\_

Հեռախոսահամար \_\_\_\_\_

SIM քարտի N° 8 9 3 7 4 0 1 \_\_\_\_\_

Հեռախոսահամար \_\_\_\_\_

SIM քարտի N° 8 9 3 7 4 0 1 \_\_\_\_\_

Հեռախոսահամար \_\_\_\_\_

SIM քարտի N° 8 9 3 7 4 0 1 \_\_\_\_\_

Հեռախոսահամար \_\_\_\_\_

SIM քարտի N° 8 9 3 7 4 0 1 \_\_\_\_\_

Հեռախոսահամար \_\_\_\_\_

Համաձայն եմ իմ անհատական տեղեկատվությունը ներառել տեղեկատուներում

այո  ոչ

Մույն Պատվեր Գիմումը ստորագրելով՝ ես հաստատում եմ իմ ցանկությունը «ՎեՆՍ Մրմենիա» ՓԲԸ GSM շարժական կապի բաժանորդ դառնալու մասին: Ծանոթացել եմ և համաձայն եմ «ՎեՆՍ Մրմենիա» ՓԲԸ GSM շարժական կապի կանխավճարային /հետվճարային համակարգի ծառայությունների մատուցման պայմաններին:

Նախկինում ունեցել եմ «ՎեՆՍ Մրմենիա» ՓԲԸ հետ կնքված N \_\_\_\_\_ պայմանագիրը, որով ունեմ վատարված դրամական պարտավորություն «ՎեՆՍ Մրմենիա» ՓԲԸ հանդեպ, որը « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ. դրությամբ կազմում է \_\_\_\_\_ դրամ: Պարտքը ընդունում եմ ամբողջությամբ և պարտավորվում եմ այն վճարել ըստ «ՎեՆՍ Մրմենիա» ՓԲԸ գործող կարգի:

Օպերատոր _____ <small>(Մնուն, ազգանուն)</small>	_____	Քաժանորդ _____ <small>(Մնուն, ազգանուն)</small>	_____
Միջնորդ _____ <small>(գործակալ, դիկեր)</small>	_____	Լիազորված անձ _____ <small>(Մնուն, ազգանուն)</small>	_____

# «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ շարժական կապի կանխավճարային համակարգի ծառայությունների մատուցման Պայմաններ (Այսուհետև՝ Պայմաններ)

## 1. Ընդհանուր դրույթներ.

1.1. Սույն Պայմանները մշակվել են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքին, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներին և առարկային առնչվող այլ իրավական ակտերին համապատասխան: Դրանք կարգավորում են «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ (այսուհետև՝ Օպերատոր) կողմից կանխավճարային համակարգի բաժանորդներին (այսուհետև՝ Բաժանորդ(ներ)) շարժական կապի ծառայությունների, ինչպես նաև դրանց հետ առնչվող այլ ծառայությունների մատուցման հետ կապված հարաբերությունները:

Սույն Պայմանները Օպերատորի կողմից սահմանվում են ինքնուրույն, հանդիսանում են հրապարակային օֆերտա (առաջարկ) և կարող են Բաժանորդի կողմից ընդունվել ոչ այլ կերպ, քան ամբողջապես դրանց հետ համաձայնվելու պայմանով:

Սույն Պայմանները և դրանցում կատարված փոփոխությունները գետեղվում են Օպերատորի ինտերնետային կայքում:

1.2. Սույն Պայմանները՝ Օպերատորի կողմից շարժական կապի կանխավճարային համակարգի ծառայությունների, հավելավճարով և շարժական կապի ցանցով մատուցվող ծառայությունների մատուցման համար Օպերատորի կողմից սահմանված և Օպերատորի պաշտոնական beeline.am կայքում ներկայացվող սակագների, ծառայությունների մատուցման պայմանների (ըստ Բաժանորդի կողմից ընտրված Մակագնային Պլանի) և Պատվեր-դիմումի հետ միասին հանդիսանում են շարժական կապի կանխավճարային համակարգի ծառայությունների (այսուհետև՝ Ծառայություններ) մատուցման Պայմանագիր (այսուհետև՝ բոլորը միասին՝ Պայմանագիր)՝ կնքված Օպերատորի և Բաժանորդի միջև (այսուհետև՝ Կողմեր): Ընդ որում Բաժանորդը պարտավոր է սույն պայմանագրի գործողության ժամանակ երեք անընդմեջ ամիսների ընթացքում իրեն հատկացված համարը օգտագործել էլքային կամ մուտքային (ձայնային կամ ոչ ձայնային) ծառայությունների ստացման համար և/կամ կատարել

հաշվի լիցքավորում և/կամ վճարել Օպերատորի կողմից մատուցվող ցանկացած ծառայությունների համար:

1.3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու օրվանից:

1.4. Կողմերի միջև Պայմանագիրը համարվում է կնքված անժամկետ՝ եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի համաձայնությամբ: Կողմերի միջև ժամկետային Պայմանագրի կնքման դեպքում վերջինիս ժամկետը յուրաքանչյուր անգամ համարվում է երկարաձգված հերթական ժամկետով:

1.5. Պայմանագիրը չի տարածվում Կողմերի հարաբերությունների վրա՝ կապված Բաժանորդային սարքավորումների ձեռքբերման հետ:

1.6. Օպերատորը կարող է հրաժարվել Պայմանագրի կնքումից, կամ Ծառայությունների մատուցումից, եթե՝  
ա) բացակայում են տեխնիկական հնարավորությունները,  
բ) Բաժանորդը չի ներկայացրել սույն Պայմաններով նախատեսված փաստաթղթերը,

գ) Բաժանորդն ունի ժամկետանց պարտք Օպերատորի հանդեպ, որն առաջացել է սույն Պայմանագրից կամ Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված հեռախոսակապի ծառայությունների մատուցմանայլ և նախկին պայմանագրերից:

1.7. Ծառայությունները չեն կարող օգտագործվել Բաժանորդի կողմից վիճակախաղերի, քվեարկությունների, վիկտորինաների, մրցույթների, գովազդի, հարցումների անցկացման, զանգվածային հաղորդագրությունների ուղարկման և նմանատիպ անձնական շահույթ հետապնդող այլ նպատակներով՝ առանց Օպերատորի գրավոր համաձայնության:

Ծառայությունները չեն կարող օգտագործվել Բաժանորդի կողմից այլ անձանց տեղական կամ միջազգային հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման նպատակով, ներառյալ, բայց չսահմանափակված Ինտերնետ հեռախոսակապով, զանգի վերջնավորման ծառայությամբ և նմանատիպ այլ ծառայություններով:

## 2. Բաժանորդի կողմից ներկայացվող փաստաթղթերը

2.1. Պայմանագիրը կնքելիս, նման մտադրություն ունեցող անձը պարտավոր է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

2.1.1 Իրավաբանական անձ՝  
ա) պետական գրանցման վկայականի պատճենը հաստատված իրավաբանական անձի կնիքով  
բ) պայմանագիրը ստորագրելու համար իր անունից հանդես եկող անձի լիազորությունները և անձը հաստատող փաստաթղթերը;

2.1.2. Անհատ ձեռնարկատեր Պետական գրանցման վկայականը, անձը հաստատող փաստաթուղթ;

2.1.3. Ֆիզիկական անձ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթուղթ:

2.2. Բաժանորդի կողմից Օպերատորին տրամադրված 2.1 կետում նշված տվյալների փոփոխության դեպքում (ֆիզիկական անձի դեպքում՝ անվան, հայրանվան, անձնագրային տվյալների, բնակության վայրի փոփոխության, իրավաբանական անձի դեպքում՝ անվանման, գտնվելու վայրի հասցեի և այլն), Բաժանորդը պարտավոր է նման փոփոխությունների մասին գրավոր տեղեկացնել

Օպերատորին՝ փոփոխությունների ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 30-օրյա ժամկետում:

2.3. Բաժանորդ-իրավաբանական անձը պարտավորվում է տեղեկացնել Օպերատորին՝ իր հանդեպ անվճարունակության վարույթ հարուցելու կամ իրավաբանական անձի կամավոր լուծարման մասին որոշում կայացնելու վերաբերյալ՝ նշված իրադարձության մասին հայտնի դառնալու օրվանից սկսած՝ 3 օրացուցային օրվա ընթացքում:

## 3. Ծառայությունների մատուցում.

3.1. Ծառայությունների մատուցման ժամանակահատվածում Օպերատորը Բաժանորդին օգտագործման նպատակով տրամադրում է SIM քարտ, և այդ SIM քարտին վերագրված հեռախոսահամար, որոնք հանդիսանում են Օպերատորի սեփականությունը և չեն կարող փոխանցվել այլ անձի՝ առանց Օպերատորի գրավոր համաձայնության:

3.2. Մատուցվող Ծառայությունների ցանկը որոշվում է Բաժանորդի կողմից ընտրված Մակագնային Պլանով և այն լրացուցիչ ծառայություններով, որոնք

պատվիրված են և/կամ պատվիրվում և օգտագործվում են Բաժանորդի կողմից՝ համաձայն Օպերատորի կամ համապատասխան ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող երրորդ անձանց կողմից

պարբերաբար ներկայացվող առաջարկների՝ (պաշտոնական կայք կամ այլ կերպ), և վճարվում է Բաժանորդի կողմից՝ սույն Պայմանագրում սահմանված կարգով և համապատասխան Ծառայությունների մատուցման և վճարման կարգի համաձայն: Միևնույն ժամանակ, մատուցվող ցանկը կարող է սահմանափակվել բաժանորդային սարքավորման հնարավորություններով, իսկ Ռոումինգի դեպքում՝ նաև Ռոումինգային օպերատորի ցանցի հնարավորություններով և այդ օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների ցանկով:

3.3. Բաժանորդը ծառայությունների ցանկի, մատուցման պայմանների, սակագնային պլանների, ցանցի ծածկույթի վերաբերյալ, ինչպես նաև Ծառայությունների մատուցման հետ կապված այլ տեղեկատվությունը կարող է ստանալ Օպերատորի [www.beeline.am](http://www.beeline.am) ինտերնետային կայքից:

3.4. Ծառայությունները մատուցվում են Օպերատորի ցանցի և Ծառայությունների մատուցումն ապահովելու համար ներգրավված այլ ցանցերի առկա տեխնիկական հնարավորությունների շրջանակներում:

3.5. Ծառայությունները Օպերատորի կողմից մատուցվում են շուրջօրյա, առանց ընդմիջումների, բացառությամբ վերանորոգման և պրոֆիլակտիկ աշխատանքներով պայմանավորված ընդմիջումների:

3.6. Բաժանորդին տրամադրվող ռադիո-հեռախոսային կապը կարող է վատթարանալ, ընդհատվել կամ ուղեկցվել խանգարումներով՝ շինությունների հարևանությամբ կամ դրանց ներսում, թունելներում, նկոտներում կամ ստորգետնյա այլ շինություններում, կապված տեղանքի առանձնահատկությունների, օդերևութաբանական պայմանների հետ, ինչպես նաև Օպերատորի կամքից անկախ այլ պատճառներով:

3.7. Օպերատորը պատասխանատվություն չի կրում հեռահաղորդակցության ծառայությունների թերությունների համար, որոնք պայմանավորված են Բաժանորդի կողմից անսարք կամ չսերտիֆիկացված բաժանորդային սարքավորումների օգտագործմամբ:

3.8. Բաժանորդին տրամադրվող շարժական կապի որակը կարող է պայմանավորվել տեղական, ներպետական և

միջազգային հեռախոսակապի օպերատորների սարքավորումների որակով և վերջինների հեռահաղորդակցության ցանցերի առանձնահատկություններով, որոնք Օպերատորի հսկողությունից դուրս են:

3.9. Մատուցված Ծառայությունների ծավալը որոշվում է Օպերատորի բիլինգային համակարգի գրանցումների հիման վրա և/կամ այլ հեռահաղորդակցության օպերատորների բիլինգային համակարգերի կողմից գրանցված տվյալների հիման վրա, մասնավորապես՝ Բաժանորդին Ռոումինգի ծառայությունների մատուցման դեպքում: Նշված գրանցումները/տվյալները հանդիսանում են Բաժանորդին մատուցվող Ծառայությունների և դրանց ծավալների մասին անժխտելի ապացույց:

3.10. Հեռախոսագանգի (միացման) տևողությունը Օպերատորի բիլինգային համակարգի կողմից հաշվարկվում է զանգող անձի կամ բաժանորդային սարքավորման կողմից պատասխանի ստացման առաջին վայրկյանից մինչև զանգող և զանգը ստացող անձի կամ բաժանորդային սարքավորման կողմից միացման դադարեցման պահը:

3.11. Կապի որոշ ծառայություններից օգտվելու դեպքում ծառայությունների օգտագործման հատուկ պայմանների մասին Բաժանորդը կարող է տեղեկացվել կապի սեանսը սկսվելու պահին: Կապի սեանսը շարունակելուն ուղղված Բաժանորդի հետագա գործողությունները համարվում են տվյալ պայմաններն ընդունելու՝ վերջինիս անվերապահ համաձայնություն: Ծառայությունների մատուցման պայմանների հետ համաձայն չլինելու դեպքում Բաժանորդը պետք է դադարեցնի կապի սեանսը:

#### 4. Սակագներ

4.1. Ծառայությունների սակագները (այսուհետ՝ Սակագներ), Սակագների կիրարկման (այդ թվում՝ ժամկետները և գործողության տարածքները) և դրանց վճարման պայմանները, ինչպես նաև սակագրման միավորը Օպերատորի կողմից սահմանվում է ինքնուրույն: Սակագները Օպերատորի կողմից կարող են սահմանվել Սակագնային պլանների տեսքով, ինչպես նաև ցանկացած Սակագնային պլանի դեպքում գործող առանձին Սակագների տեսքով:

4.2. Գործող և նոր Սակագների, ինչպես նաև դրանց վճարման մասին տեղեկատվությունը ներկայացվում է Օպերատորի Բաժանորդների սպասարկման կետերում,

Օպերատորի Բնտերնետ կայքում, ինչպես նաև կարող է Օպերատորի կողմից տրամադրվել այլ եղանակներով և ձևերով:

4.3 Պայմանագիրը կնքելիս Բաժանորդը Պատվեր-դիմումում նշում է իր նախընտրած Սակագնային պլանը:

Բաժանորդն իրավունք ունի փոխել սակագնային պլանը Օպերատորի կողմից առաջարկվող այլ Սակագնային պլանով՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով:

Այն դեպքում, եթե մինչև պայմանագիր կնքելը բաժանորդը /հաճախորդը օգտվել է Օպերատորի կողմից մատուցվող շարժական կապի կանխավճարային համակարգի ծառայություններից, ապա Պայմանագիր կնքելիս Բաժանորդի կողմից ընտրված է համարվում այն Սակագնային պլանը, որն օգտագործվել է վերջինիս կողմից Պայմանագիր կնքելու պահին: Սույն կետում նշված բոլոր դեպքերում Բաժանորդի կողմից ընտրված Սակագնային պլանը, ինչպես նաև ցանկացած Սակագնային պլանի դեպքում գործող առանձին Սակագները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մաս:

#### 5. Հաշվարկները, հաշիվների ներկայացումը և վճարումները

5.1. Մատուցված Ծառայությունների համար Օպերատորը իրականացնում է հաշվարկներ Բաժանորդի հետ: Հաշվարկներն իրականացնելու համար Օպերատորը կարող է ներգրավել երրորդ անձանց:

5.2. Մատուցված Ծառայությունների համար հաշվարկները իրականացվում են ՀՀ դրամով: Ծառայությունների սակագները արտահայտվում են ՀՀ դրամով: Սակագները սահմանվում են Օպերատորի գնացուցակներում:

5.3. Ծառայությունների դիմաց վճարումը իրականացվում է վճարման քարտի ակտիվացման միջոցով կամ Օպերատորի կողմից առաջարկվող ցանկացած այլ կերպ (այդ թվում՝ դրամական միջոցների մուտքագրում՝ վճարման այլ ուղիներով): Ընդ որում, վճարման ցանկացած եղանակների վրա տարածվում են Հաշվի լրացման հետ առնչվող սույն

Պայմանների բոլոր դրույթները, այդ թվում՝ ժամկետները, որոնց ընթացքում իրավունք է տրվում օգտվել Ծառայություններից:

5.4. Ծառայությունների համար վճարումները իրականացվում են Բաժանորդի կողմից՝ իր Հաշվին գումար մուտքագրելու միջոցով, որից հետո Բաժանորդը իրավունք է ստանում օգտվելու Ծառայություններից՝ Հաշվի հաշվեկշռում եղած գումարով պայմանավորված ծավալով և Ծառայությունների սակագնով՝ Օպերատորի կողմից սահմանված ժամանակահատվածի ընթացքում:

5.5. Ծառայություններից օգտվելու ընթացքում Հաշվի հաշվեկշռում եղած գումարը համապատասխանաբար նվազում է՝ ընդունված վճարման սակագնով սահմանված չափով:

5.6. Հաշվի հաշվեկշռում առկա գումարի, ինչպես նաև չծախսված մնացորդային դրամական միջոցների մասին տեղեկությունները Բաժանորդին տրամադրվում են՝ Օպերատորի կողմից սահմանված կարգով:.

5.7. Հաշվեկշռի գործողության ժամկետը լրանալուց կամ Հաշվի հաշվեկշռում եղած գումարը սպառվելուց հետո Բաժանորդին կարող է Ծառայություններից միակողմանի օգտվելու հնարավորություն ընձեռել՝ մինչև Ծառայություններից օգտվելու ժամկետի լրանալը, որը սահմանվում է Օպերատորի կողմից, ընդ որում նաև՝ հեռախոսային միացման ընդհատմամբ: Հաշվեկշռում գումարի սպառման տակ Կողմերը հասկանում են այն՝ պայմանական գումարի՝ չափի լրանալը, որը բավարար չէ Օպերատորի համապատասխան Մակագնային պլանով սահմանված հեռախոսային նվազագույն միացումը ապահովելու համար: Ծառայություններից միակողմանի օգտվելու տակ Կողմերը հասկանում են ելքային զանգեր կատարելու հնարավորության և Բաժանորդին մատուցվող այլ Ծառայությունների արգելափակում:

5.8. Առանձին դեպքերում Օպերատորը կարող է չդադարեցնել Ծառայությունների մատուցումը և որոշակի ժամանակահատվածի ընթացքում Բաժանորդին ընձեռել Ծառայություններից օգտվելու հնարավորությունը՝ պայմանական գումարի՝ Հաշվի հաշվեկշռի գրայական մեծությունից նվազելու դեպքում: Դրա արդյունքում առաջացած պարտքի գումարը մարվելու է Հաշվի հաշվեկշռին Բաժանորդի կողմից հետագայում մուտքագրված դրամական միջոցների հաշվին:

5.9. Հաշվեկշռի համալրման դեպքում մնացած գումարը պահպանվում և գումարվում է նոր մուտքագրված գումարին:

5.10. Եթե հաշվեկշռը չի լրացվում մինչև հաշվեկշռի գործողության ժամկետի լրանալը, Բաժանորդին կարող է ընձեռել հնարավորություն՝ միակողմանի օգտվել Ծառայություններից՝ մինչև Օպերատորի կողմից սահմանված Ծառայությունների մատուցման ժամկետի լրանալը: Եթե Հաշվի հաշվեկշռը չի լրացվում մինչև Ծառայությունների մատուցման ժամկետի լրանալը, Պայմանագիրը համարվում է լուծված՝ Պայմանագրով սահմանված կարգով:

5.11. Հաշվեկշռի գործողության և Ծառայությունների մատուցման ժամկետների մասին Բաժանորդներին տեղեկացվում է տեղեկատվական սպասարկման համակարգի, այդ թվում՝ Օպերատորի Ինտերնետային պաշտոնական կայքի միջոցով:

5.12. Սույն Բաժնում նշված ժամկետների լրանալուց հետո Բաժանորդը կարող է վերականգնել Ծառայությունների մատուցման պայմանագրային հարաբերությունները միայն դիմելով Բաժանորդների սպասարկման ծառայություն՝ կապի ցանցին միանալու և դրա հետ կապված ընթացակարգերի համար վճարում կատարելուց հետո:

5.13. Բաժանորդի Հաշվի վրա Ծառայությունների մատուցման դիմաց առաջացած պարտքի առկայության դեպքում, վերջինս պարտավոր է այն մարել ոչ ուշ, քան Հաշիվը ներկայացնելուց հետո 30-օրյա ժամկետում:

## **6. Պայմանագրի պայմանների, ծառայությունների և սույն Պայմանների փոփոխությունները**

6.1. Բաժանորդն իրավունք ունի Օպերատորի սահմանած կարգով փոփոխել իր կողմից օգտագործվող Ծառայությունների ցանկը, հեռախոսահամարը և/կամ Սակագնային պլանը՝ տեղեկացնելով այդ մասին Օպերատորին վերջինիս կողմից սահմանված կարգով:

6.2. Օպերատորն իրավունք ունի առաջարկություններ ներկայացնել սույն Պայմաններում, Սակագնային պլաններում և/կամ առանձին Սակագներում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու վերաբերյալ՝ Օպերատորի բաժանորդների սպասարկման կետերում և Օպերատորի Ինտերնետ կայքում համապատասխան հայտարարությունների հրապարակման ճանապարհով: Պայմաններում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու վերաբերյալ հայտարարության

հրապարակմանը հաջորդող 10 օրվա ընթացքում առաջարկված փոփոխությունների և/կամ լրացումների վերաբերյալ Բաժանորդից գրավոր անհամաձայնություն չստանալու կամ վերջինիս կողմից հայտարարության հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից հետո Ծառայություններից օգտվելը շարունակելու դեպքում այդպիսի փոփոխությունները և/կամ լրացումները կհամարվեն Բաժանորդի կողմից ընդունված և նրա հետ համաձայնեցված: Սակագնային պլաններում և/կամ առանձին Սակագներում փոփոխությունները և/կամ լրացումները ուժի մեջ են մտնում դրանց մասին հրապարակված հայտարարության մեջ նշված ժամկետում: Մինչև հայտարարության մեջ նշված ժամկետը առաջարկված փոփոխությունների և/կամ լրացումների վերաբերյալ Բաժանորդից գրավոր անհամաձայնություն չստանալու, կամ վերջինիս կողմից Ծառայություններից օգտվելը շարունակելու դեպքում այդպիսի փոփոխությունները և/կամ լրացումները կհամարվեն Բաժանորդի կողմից ընդունված և նրա հետ համաձայնեցված:

## **7. Պայմանագրի լուծումը**

7.1. Բաժանորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ ներկայացնելով գրավոր դիմում Պայմանագրի լուծման համար առաջարկվող ամսաթվից 7 օրացուցային օր առաջ՝ կատարելով փաստացի մատուցված ծառայությունների համար վերջնահաշվարկ: Բաժանորդը փոխհատուցում է Պայմանագրից հրաժարվելու հետևանքով Օպերատորի կրած ծախսերը՝ եթե նման հատուցումը նախատեսված է սույն Պայմանագրով և ՀՀ գործող օրենսդրությամբ:

7.2. Օպերատորն իրավունք ունի սահմանափակել կամ կասեցնել Ծառայությունների մատուցումը և միակողմանի լուծել պայմանագիրը Բաժանորդի կողմից սույն Պայմանագրի դրույթներից որևէ մեկի խախտման, այդ թվում՝ մատուցված ծառայությունների դիմաց առաջացած պարտքերի առկայության, ինչպես նաև սույն պայմանագրի 1.2 կետում նշված ժամկետում բաժանորդին հատկացված համարը ելքային կամ մուտքային (ձայնային կամ ոչ ձայնային) ծառայությունների

ստացման համար չօգտագործելու կամ նշված համարը չիցքավորելու կամ Օպերատորի կողմից մատուցվող ցանկացած ծառայությունների դիմաց չվճարելու դեպքերում:

Ծառայությունների մատուցման վերսկսումը հնարավոր է միայն խախտումները ամբողջությամբ վերացնելու դեպքում: Ընդ որում, այն դեպքում, եթե Բաժանորդը ունի մեկից ավելի հեռախոսահամար, կամ լրացուցիչ Բաժանորդային համարներ և/կամ նույնականացման ունիկալ կոդեր, սպասարկումը վերսկսվում է միայն բոլոր համարների և/կամ նույնականացման կոդերի համար առաջացած պարտքերը ամբողջությամբ մարելուց հետո: Բաժանորդի կողմից մինչև Պայմանագրի լուծումը իր դրամական պարտավորությունները չկատարելու դեպքում Օպերատորը իրավունք ունի հաշվանցելու Բաժանորդի չօգտագործված դրամական միջոցները՝ մատուցված Ծառայությունների դիմաց առաջացած պարտքերը մարելու հաշվին: Բաժանորդի կողմից սույն Պայմանագրով նախատեսված հաշիվները չվճարելու դեպքում, Օպերատորը իրավունք ունի ձեռնարկելու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցառումները՝ Բաժանորդից չկատարված դրամական պարտավորությունների գումարները և իր կրած վնասները բռնագանձելու համար: 7.3 Պայմանագրի լուծման պատճառներից անկախ, Պայմանագրի լուծման օրվանից Կողմերի պարտավորությունները համարվում են դադարեցված, բացառությամբ չկատարված վճարման պարտավորությունների՝ մատուցված բայց չվճարված Ծառայությունների համար:

## 8. Կողմերի պատասխանատվությունը

8.1. Պայմանագրում ամրագրված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրության համաձայն: 8.2. Օպերատորի պատասխանատվությունը կապված բջջային կապի խափանումների, այդ թվում՝ կապի որակի վատացման և ցանցային սարքավորումների շարքից դուրս գալու հետ, առաջանում է միայն այն դեպքում, եթե ապացուցված է, որ խափանումները տեղի են ունեցել Օպերատորի մեղքով: 8.3. SIM քարտի կորստի դեպքում Բաժանորդը պարտավոր է այդ մասին տեղեկացնել Օպերատորին, իսկ Օպերատորը

պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ տեղեկացումը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում մատուցվող ծառայությունները կասեցնելու համար: Այնուամենայնիվ, Բաժանորդը շարունակում է պատասխանատվություն կրել նշված իրադարձությունից հետո մինչև Օպերատորի կողմից Ծառայությունների մատուցման կասեցումը ծագած և Պայմանագրով ամրագրված պարտավորությունների համար: 8.4. Բաժանորդը պատասխանատվություն է կրում բոլոր այն ռիսկերի համար, որոնք կապված են Բնտերնետ ցանցում տեղադրված նյութերը, տեղեկատվությունը, ծառայությունները և ապրանքները/արտադրանքները օգտագործելու արդյունքում ծագած հետևանքների հետ: Բաժանորդի չիմացությունը կամ մոլորությունը չի ազատում նրան սույն կետում նշված պատասխանատվությունից 8.5 Օպերատորը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի 10.2 և 10.3 ենթակետերում նշված տեղեկությունների բացահայտման հետևանքով պատճառած ռիսկ վնասի համար:

## 9. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս մաժոր)

9.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որոնք են՝ երկրաշարժը, ռազմական գործողությունները, գործադուլը, բնակլիմայական աղետները, անբարենպաստ բնակլիմայական պայմանները, պետական մարմնի կողմից ընդունված իրավական ակտերը և այլ նմանատիպ իրադարձությունները, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը և դուրս են կողմերի վերահսկողությունից: 9.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին ծանուցելով մյուս կողմին: 9.3. Արտակարգ իրավիճակներում Օպերատորն իրավունք ունի ժամանակավորապես կասեցնել կամ սահմանափակել Ծառայությունների մատուցումը համաձայն ՀՀ օրենսդրության:

## 10. Բաժանորդի տեղեկությունների գաղտնիության և անձնական տվյալների պաշտպանության մասին

10.1 Օպերատորը պարտավոր է Բաժանորդի կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, նպատակակետի, քանակի և տեխնիկական պայմանների վերաբերյալ տեղեկությունները համարել և պահել գաղտնի: Օպերատորը իրավասու է բացահայտել այդ տեղեկությունները օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: 10.2. Սույնով Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցելու նպատակով Օպերատորի կողմից իր անձնական տվյալները մշակելու, օգտագործելու, ինչպես նաև դրանք և 10.1 կետում նշված տվյալները երրորդ անձանց /ներառյալ՝ այլ երկրներ/ փոխանցելու վերաբերյալ: Սույն պայմանագիրը կնքելով Բաժանորդը հավաստում է, որ Օպերատորի կողմից ծանուցված է Բաժանորդի անձնական տվյալները մշակելու Օպերատորի մտադրության, մշակման իրավական հիմքերի, նպատակի ինչպես նաև “Անձնական տվյալների մասին” ՀՀ օրենքով նախատեսված ծանուցմանը վերաբերող այլ տեղեկությունների մասին: 10.3. Սույն Պայմանագիրը կնքելով Բաժանորդը տեղեկացվում է, որ Օպերատորը կարող է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով վարկային բյուրոներին տրամադրել Բաժանորդի կողմից օգտագործված ծառայությունների դիմաց վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների կամ պարտավորությունների կամ դրանց կատարման մասին տեղեկություններ: 10.4 Սույն Պայմանագիրը կնքելով Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը կարճ հաղորդագրությունների (sms) և/ կամ զանգերի, կամ կապի այլ միջոցներով ստանալու Օպերատորի կողմից ներդրվող նոր ծառայությունների սակագնային պլանների, առանձին ծառայությունների նոր և գործող սակագների փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև Օպերատորի

կողմից մատուցվող կապի տարաբնույթ ծառայություններին առնչվող այլ ծանուցումներ:  
10.5.Սույնով բաժանորդը համաձայնվում է, որ իր հեռախոսահամարը կարող է օգտագործվել մարքետինգային նպատակով նաև երրորդ անձանց կողմից, որը կարող է արտահայտվել գովազդային բնույթի կարճ SMS հաղորդագրությունների/զանգերի ստացման, սոցիալական հարցումների, համացանցում, սոցիալական ցանցերում գովազդի ցուցադրման ձևով և այլն: Օպերատորը պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված հաղորդագրությունների իրավական հետևանքների համար:

10.6. Բաժանորդը իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել 10.4 և 10.5 կետերում նշված համաձայնությունից(ներից), այդ մասին գրավոր կամ Օպերատորի կողմից սահմանված այլ ձևով իր կամարտահայտումը Օպերատորին հասցնելու միջոցով:

10.7 Օպերատորի կողմից կձեռնարկվեն կազմակերպչական, տեխնիկական, ծրագրային միջոցներ սույն պայմանագրի 10.6 կետի ապահովման ուղղությամբ:

**11. Վեճերի կարգավորումը  
Օպերատորի ու Բաժանորդի միջև ծագած վեճերը**

Կողմերը պարտավորվում են քննարկել ու կարգավորել բանակցությունների միջոցով: Եթե Կողմերը համաձայնության չեն հասնում, ապա վեճերը ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Բաժանորդի կողմից սույն պայմանագրից առաջացած դրամային պարտավորությունները սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու դեպքում Օպերատորն իրավունք ունի Բաժանորդի պարտքերը բռնագանձելու ուղղությամբ ձեռնարկել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցները, ներառյալ դիմել դատարան՝ գումարի բռնագանձման պահանջով: Օպերատորն իրավունք ունի սույն կետում նշված պահանջի իրավունքը զիջել կամ

իրավունքի իրագործումը հանձնարարել երրորդ անձանց: Ընդ որում, սույն Պայմանագիրը կնքելով, Բաժանորդը ընդունում և համաձայնվում է, որ պահանջի իրավունքը զիջելու կամ իրավունքի իրագործումը երրորդ անձանց հանձնարարելու դեպքում Օպերատորը կփոխանցի պահանջի իրավունքը հաստատող փաստաթղթերը և կհաղորդի պահանջի իրականացման համար նշանակություն ունեցող Բաժանորդին վերաբերող այլ ցանկացած տեղեկությունները /ներառյալ անձնական տվյալներ/ երրորդ անձանց, ի օգուտ որոնց զիջվել է պահանջի իրավունքը և/կամ հանձնարարվել է իրավունքի իրագործումը:

**«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ, հասցե՝ ք.Երևան  
375014 Ահարոնյան**